Գործ թիվ ԵԴ2/4265/02/24

ՎՃԻՌ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը(այսուհետ՝ դատարան),նախագահությամբ

Դատավոր՝ Արմինե Թումասյանի

«29» հուլիսի 2024 թվական **ք. Երևան**

գրավոր ընթացակարգով, քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «ՁԻ ԷՍ ԷՆԵՐՁԻ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 25.04.2024 թվականի թիվ 116 որոշումը ոչ իրավաչափ /անվավեր/ ճանաչելու պահանջի մասին,

1. Թիվ ԵԴ2/4265/02/24 քաղաքացիական գործով Պատասխանող ՀՀ Պաշտպանության նախարարության միջնորդությունը՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին, մերժել:

2. «ՁԻ ԷՍ ԷՆԵՐՁԻ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի 25.04.2024 թվականի թիվ 116 որոշումը ոչ իրավաչափ /անվավեր/ ճանաչելու պահանջի մասին, մերժել:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արմինե Թումասյան**

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024-07-29 15:43:00